ՀՀՀ.2-219

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար

Պարոն Վ. Սամսոնյանին

Հարգելի պարոն Սամսոնյան,

«Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրերի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասում 9 հարկանի 2 բազմաբնակարան բնակելի շենքերով համալիրի կառուցման համար, Ձեր կողմից 13.12.2021թ-ին տրված հ.242 նախագծման թույլտվության համաձայն, «ՍՊ-2» ՍՊԸ-ի կողմից մշակվել է նախագիծ, որը «ՀՀ նախագծերի Պետական արտագերատեսչական փորձաքննություն » ՓԲԸ կողմից 23.03.2022թ-ին ստացել է N ՆՊՓ108 փորձագիտական դրական եզրակացությունը և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2021թվականի սեպտեմբերի 9-ի N 58 -Ա հրամանով ստեղծված պետական համալիր փորձաքննական հանձնաժողովի 13.07.22թ-ի նիստի դրական եզրակացությունը: (եզրակացություն-125)

Վերընշված համալիրի կառուցման համար, խնդրում ենք տալ համապատասխան շինարարության թույլտվություն և հաշվի առնելով ծրագրի բարեգործական լինելը, չգանձել տեղական տուրքի և էկոլոգիայի համար նախատեսվող վճարները:

Կից ներկայացնում ենք շինարարության թույլտվության հայտը, նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը և փորձաքննության եզրակացությունները:

Հարգանքով՝

Հայկակ Արշամյան

Գործադիր տնօրեն

18.07.2022թ.

"Hayastan" All-Armenian Fund ՀԻՄՆԱԴՐԱՄ ...02507456

12308

19.07.2022թ